

Խոյ պլաստիլինից

Պլաստիլինե խոյ պատրաստելու համար անհրաժեշտ է՝ *Նարնջագույն, դեղին, վարդագույն, կանաչ, շագանակագույն և սև գույնի պլաստիլին, ծեփի գործիք:*

1. Մարմինը

Երկար գլան ենք պատրաստում, երկու ծայրերից ճկում, գործիքով ծայրերին կտրվածքներ անում այնպես, որ ստացվեն ոտիկները:

2. Գլուխն ու վիզը

Պատրաստում ենք երկրորդ գլանը, համեմատաբար փոքր չափերի: Այն ամրացնում ենք մարմնին, թեթևակի թեքում, որպեսզի ստանանք խոյի մռուլթը:



3. Պոզիկները

Պատրաստում ենք գլան, ապա այն պարուլյրածն փաթաթում



Նման դետալ էլ (մի քիչ փոքր) պետք կգա պոչիկի համար:

4. Ձևավորենք գլուխը

Գլխին ամրացնում ենք խոյերը, խոպոպավոր կատար դնում գլխին, պատրաստում ականջներն ու աչքերը և փոքրիկ քիթիկ դնում մռուլթի ծայրին:



5. Չարդարենք խոյին

Չարդարելու համար տարբեր գույներից մանր գնդիկներ ենք պատրաստում, դրանք տափակեցնում ու ամրացնում մարմնին:

Պատրաստ է

